# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 օգոստոսի 2025 թվականի N 1148 - Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի N 730-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

---

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածը և 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N 1387-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կողմից իրականացվող ոչ պարենային արտադրանքների և ծառայությունների նկատմամբ պետական վերահսկողության իրականացման ստուգաթերթերը հաստատելու մասին» N 730-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման N 17 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

2) որոշման N 29 հավելվածում հարցաշարի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3. | Թանկարժեք մետաղների, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մասնագիտացված, այդ թվում՝ մանրածախ առուվաճառքն իրականացվել է միայն դրանց վրա օրենքով սահմանված կարգով հարգադրոշմի, անվանանիշի և տարբերանիշի առկայության դեպքում՝ բացառությամբ **Նմուշ 2***-**ով** սահմանված իրերի | «Թանկարժեք մետաղների մասին» օրենք, հոդված 8, մաս 2 | | | | 5.0 | Տեսազննում | |

».

3) որոշման N 30 հավելվածում հարցաշարի՝

ա. 1-ին կետի «Հղում նորմատիվ իրավական ակտերին» սյունակից հանել «պարբերություն 1» բառերը,

բ. 2-րդ կետի «Հղում նորմատիվ իրավական ակտերին» սյունակից հանել «պարբերություն 2» բառերը.

4) որոշման N 31 հավելվածում 5-րդ կետի «Ստուգման տեսակ» սյունակում «Փաստաթղթային» բառը փոխարինել «Փորձաքննություն» բառով.

5) որոշման N 34 հավելվածում հարցաշարի՝

ա. 1-ին կետի «Կշիռ» սյունակում «10.0» թիվը փոխարինել «12.0» թվով,

բ. 2-րդ կետի «Կշիռ» սյունակում «10.0» թիվը փոխարինել «12.0» թվով,

գ. 3-րդ կետի «Կշիռ» սյունակում «8.0» թիվը փոխարինել «12.0» թվով,

դ. 6-րդ կետի «Կշիռ» սյունակում «2.0» թիվը փոխարինել «6.0» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի, որն ուժի մեջ է մտնում 2025 թվականի օգոստոսի 14-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

15.08.2025

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ